# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 079-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում 11-003-0111-0002 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

2. «Ֆօքըս Օն Չիլդրեն Նաու» բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ Դիլիջան համայնքի ենթակայության թիվ 1 մանկապարտեզի տարածքում խաղահրապարակի տեղադրման ծրագրին հավանություն տալու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

3. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 2/3 հասցեի 100.2քմ մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

4. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 1-ին նրբ. թիվ 19/1 հասցեի 96.9քմ մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

5. Ֆինանսական օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում 11-003-0000-0000 ծածկագրով հողամասի մասերը հանդիսացող առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունը հաստատելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

7. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի 11-003-0276-0026 և 11-003-0276-0027 կադաստրային ծածկագրերով հողամասի մի մասը՝ 0.0376հա մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

8. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի 11-003-0317-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.048հա մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

9. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 25/1 հասցեի 600.0 քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

10. Դիլիջան համայնքի ավագանու 2021թ. նոյեմբերի 30-ի թիվ 010-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

11. Դիլիջան համայնքի ավագանու 2016թ. փետրվարի 26-ի թիվ 26 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամին Տավուշի մարզի Դիլիջան համայնքում ներդրումային ծրագրեր ներկայացնելու նպատակով նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

12. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Աղավնավանք գյուղի 1-ին փողոց թիվ 49/1 հասցեի 0.16269հա մակերեսով հողամասի մի մասը՝ 0.11678հա հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

13. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 9/1 հասցեի 1342.7քմ մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

14. Դիլիջան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 1-ի թիվ 17 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Դիլիջան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները նոր խմբագրությամբ հաստատելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

15. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի 11-003-0296-0008 կադաստրային ծածկագրով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

16. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 145/4 հասցեի վարձակալության իրավունքով տրամադրված 20.0 քմ հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

17. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 40.0 քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի պայմանները և տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

18.Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի 11-003-0102-0070 կադաստրային ծածկագրով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

19.Դիլիջան համայնքի ավագանու խմբակցությունների գործավարների և փորձագետների հաստիքային միավորները և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին

Զեկ. Դ.Սարգսյան

20.Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 2310.7 քմ ընդհանուր մակերեսով թվով 6, <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 1200.0 քմ մակերեսով թվով 1, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 1292.4 քմ մակերեսով թվով 1 հողամասերը աճուրդի և Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 772.9 քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով

օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

21. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

22.Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի 11-003-0519-0014 կադաստրային ծածկագրով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

23.Դիլիջան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

24.Գույքահարկի, հողի հարկի և անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

25. Հողի հարկի եվ գույքահարկի տույժերից ազատելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

26.Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Զեկ. Դ. Սարգսյան

27. Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մաս ին

Զեկ. Դ. Սարգսյան

28. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին

Զեկ. Դ. Սարգսյան

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 080-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 11-003-0111-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022թ. փետրվարի 28-ի թիվ 1/փ-41 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում 11-003-0111-0002 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 253 հասցեով, 11-003-0111-0002 ծածկագրով, 0.04հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես Բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել

սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 30-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.04հա




07618909

Կառ՝ ... ճարտարապետության և հողաշինության բաժնի
պետի պաշտոնակատար՝ Լ. Սաֆրոյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 081-Ա

### «ՖՕՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆօքըս օն Չիլդրեն Նաու» բարեգործական կազմակերպությունը պատրաստակամ է «Դիլիջանի Թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարածքում իրականացնել խաղահրապարակի տեղադրման ծրագիր:

Ծրագրի համակարգումը կիրականացվի Դիլիջանի համայնքապետարանի հետ համատեղ:

Նախքան խաղահրապարակի սարքավորումների մատակարարումը համայնքապետարանի ռեսուրսներով տարածքը ծածկելու համար կտրամադրվի ավազ, կապահովվի անվտանգ միջավայր, կմաքրվի քարերից, շինանյութից և հին սարքավորումներից:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 2.500.000 ՀՀ դրամ.

Հայտավորվող ֆինանսական միջոցները՝ 2.250.000ՀՀ դրամ.

Համայնքի համաֆինանսավորման չափը՝ 250.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 10%-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ «Ֆոքըս օն Չիլդրեն Նաու» բարեգործական կազմակերպության կողմից «Դիլիջանի Թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարածքում խաղահրապարակ տեղադրելու ներկայացված ծրագրին:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 082-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵԻ 100.2ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2022թ. մարտի 04-ի թիվ 105-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 2/3 հասցեի 100.2քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 2/3 հասցեի 100.2քմ հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հող:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացված հողամաս՝ S=0.0102հա




Պետ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սահրադյան

Բաղկացած է 1 էջից

էջ 1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 083-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 19/1 ՀԱՍՑԵԻ 96.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2022թ. փետրվարի 24-ի թիվ 95-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 1-ին նրբ. թիվ 19/1 հասցեի 96.9քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 1-ին նրբ. թիվ 19/1 հասցեի 96.9քմ հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.00969հա



Կազմ. Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սանթրոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 084-Ա

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել, համայնքապետարան դիմած, Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորում ստացած Նվեր Էդիկի Օհանյանին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորում ստացած Նվեր Էդիկի Օհանյանին ֆինանսական օգնություն՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 085-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 11-003-0000-0000 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022թ. մարտի 02-ի թիվ 1/փ-42 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում 11-003-0000-0000 ծածկագրով հողամասի մասերը հանդիսացող առանձին հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0000-0000 ծածկագրով հողամասի մասերը հանդիսացող, 0.04319հա և 0.24558հա մակերեսներով հողամասերը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես Գյուղատնտեսական նշանակության հող, ըստ գործառնական նշանակության՝ վարելահող:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը

պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 30-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամասեր՝ S=0.04319հա և S=0.24558հա




Կնիք՝ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սանթրոսյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 086-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0276-0026 ԵՎ 11-003-0276-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԸ՝ 0.0376ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի 11-003-0276-0026 և 11-003-0276-0027 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 0.0376հա հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0276-0026 և 11-003-0276-0027 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 0.0376հա հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.0376հա



Կազմ. Քաղաքաշինության և հողաշինության բաժնի
պետի պաշտոնակատար՝ Լ. Սանթրոսյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 087-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0317-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԸ՝ 0.048ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի 11-003-0317-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.048հա հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0317-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.048հա հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.048հա




Կազմ՝ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի
պետի պաշտոնակատար՝ Լ. Սաֆրոյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 088-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 25/1 ՀԱՍՑԵԻ՛600.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արմենուհի Վալերիի Էլիզբարյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 25 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 600.0 քմ հողամասին կից գտնվող /Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 25/1 հասցեի/ 600.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 600.0 քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 25/1 հասցեի 600.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 4100580 /չորս միլիոն հարյուր հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղ. Արմենուհի Վալերիի Էլիզբարյանին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 25/1 հասցեի 600.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 4100580 /չորս միլիոն հարյուր հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ արժեքով քաղ. Արմենուհի Վալերիի Էլիզբարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՁԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ
ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ
ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ
ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 089-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 010-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ուժը կորցրած ճանաչել Դիլիջան համայնքի ավագանու 2021թ. նոյեմբերի 30-ի թիվ 010-Ա որոշումը:
2. Ստեղծել Դիլիջան համայնքի հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
1). Բագինյան Արման - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ-հանձնաժողովի նախագահ,
2). Բաղմանյան Գառնիկ - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ-աճուրդավար,
3). Սարգսյան Արսեն-համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ-արձանագրող,
4). Սանթրոսյան Լիպարիտ - համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժ/պ -հանձնաժողովի անդամ,
5). Գրիգորյան Վարդան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ-հանձնաժողովի անդամ,

6). Թամրազյան Վարդան - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ,
7). Ալիխանյան Ռոբերտ - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:
8). Մելիքյան Սուրեն - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:
9). Խեմչյան Արշակ - համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈԶԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 090-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 26 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է

1. Ուժը կորցրած ճանաչել Դիլիջան համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 26-ի թիվ 26 որոշումը:

2. Հաստատել տարածքային զարգացման հիմնադրամին Տավուշի մարզի Դիլիջան համայնքում ներդրումային ծրագրեր ներկայացնելու և ծրագրերում փոփոխություններ կատարելու նպատակով ստեղծված նախաձեռնող խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզի
Դիլիջան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 090 -Ա որոշման

# ԿԱԶՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲԻ

| Դերը նախաձեռնող խմբում | Անուն, ազգանուն | Աշխատավայր, պաշտոն | Որ համայնքն է ներկայացնում | Կոնտակտային տվյալներ (հեռախոս, էլեկտրոնային հասցեն) |
|---|---|---|---|---|
| **Նախագահ** | 1. Դավիթ Սարգսյան | Դիլիջանի համայնքի ղեկավար | Դիլիջան | 093 15-51-53<br>d.sargsyan@dilijan.am |
| **Նախագահի տեղակալ** | 2. Բազինյան Արման | Դիլիջան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | Դիլիջան | 094 08-09-06<br>a.bazinyan@dilijan.am |
| **Քարտուղար** | 3. Արփի Թամրազյան | Դիլիջանի համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | Դիլիջան | 094 47-33-46<br>arpi.tamrazyan@outlook.com |
| **Հետադարձ կապի / բողոքներին արձագանքման համակարգող** | Վարդան Գրիգորյան | Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ | Դիլիջան | 094 77-49-11<br>vardan.grigoryan.15@mail.ru |
| **Նախաձեռնող խմբի անդամներ** | 4. Մխիթար Հովհաննիսյան | Հաղարծին բնակավայրի վարչական ղեկավար | Հաղարծին | 077 73-57-76<br>gexec.tamrazyan@mail.ru |
| | 5. Վախթանգ Թամրազյան | Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավար | Թեղուտ | 098 00-83-63<br>v.tamrazyan@icloud.com |
| | 6. Գևորգ Ամիրխանյան | Գոշ բնակավայրի վարչական ղեկավար | Գոշ | 094-94-90-09<br>goshhamaynq@mail.ru |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 7. Գագիկ Շահնազարյան | Խաչարձան բնակավայրի վարչական ղեկավար | Խաչարձան | 093 30-29-59 shahnazaryan1970@list.ru |
| | 8.Ալեքսանդր Հարությունյան | Աղավնավանք բնակավայրի վարչական ղեկավար | Աղավնավանք | 093 41-46-41 sash.harutunyan92@mail.ru |
| | 9. Հովհաննես Նաղդալյան | Հովք բնակավայրի վարչական ղեկավար | Հովք | 077 05-15-51 hovq.tavush@gmail.com |
| | 10. Վանուշ Փիլոյան | «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ | Դիլիջան | 094 83-40-04 pil-van@mail.ru |
| | 11. Էմին Մարգարյան | «Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ | Դիլիջան | 094 55-77-90 emo790@mail.ru |
| | 12. Անուշավան Բաբինյան | Գլխավոր մասնագետ, տնտեսական զարգացման գծով պատասխանատու | Դիլիջան | 093 66-00-63 anushawan.babinyan@gmail.com |
| | 13. Նոնա Գրիգորյան | Դիլիջանի համայնքի ղեկավարի խորհրդական | Դիլիջան | 099 21-23-70 nonagrigoryan2011@mail.ru |
| | 14. Արթուր Ղազարյան | «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ | Դիլիջան | 077 77-25-05 artur.ghazaryan@yccd.am |
| | 15. Վիգեն Թամրազյան | Ակտիվ երիտասարդական խմբի ներկայացուցիչ | Դիլիջան | 094 54-56-65 vigen.tamrazyan@yccd.am |
| | 16. Թամար Փիլոյան | Սոցիալական աշխատող | Դիլիջան | 094 88-28-97 nunis555@mail.ru |
| | 17. Քրիստինե Սարգսյան | Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց ուսումնական գծով | Դիլիջան | 098 027803 qristine.sargsyan.1979@bk.ru |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | փոխտնօրեն,<br>ավագանու անդամ | | |
| | 18. Արշակ Խեմչյան | «Ծիրան» մարկետ ՍՊԸ Դիլիջան մ/ճ տնօրեն,<br>ավագանու անդամ | Դիլիջան | 094 88-68-23<br>arshakkhemchyan14@gmail.com |
| | 19. Շուշանիկ Սահակյան | «Երիտասարդական գաղափարներ» ԵՀԿ նախագահ,<br>ավագանու անդամ | Դիլիջան | 094 05-06-96<br>shushsahakyan@gmail.com |
| | 20. Նունե Սանթրոսյան | Անհատ ձեռնարկատեր,<br>ավագանու անդամ | Դիլիջան | 099 77-76-48<br>nune.santrosyan@mail.ru |
| | 21. Գայանե Լալայան | Իսպաներենի դասախոս,<br>ավագանու անդամ | Դիլիջան | 055 70-25-15<br>gayanelalayan6@gmail.com |
| **ՆԽ գրասենյակի հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն** | *Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, 0268-2-25-85 dilijan1@yahoo.com* | | | |
| **ՆԽ իրավական կարգավիճակը** | *Դիլիջան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 090-Ա որոշում* | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 091-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՂԱՎՆԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49/1 ՀԱՍՑԵԻ 0.16269ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԸ՝ 0.11678ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2022թ. մարտի 17-ի թիվ 146-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղի 1-ին փողոց թիվ 49/1 հասցեի 0.16269հա հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասի մի մասը՝ 0.11678հա հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Աղավնավանք գյուղի 1-ին փողոց թիվ 49/1 հասցեի 0.16269հա հողամասի մի մասը՝ 0.11678հա հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՁԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՋՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՀՈՂԱՄԱՍԻ ԽՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.11678հա



Կազմ՝ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սանբրյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 092-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵԻ 1342.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2022թ. մարտի 18-ի թիվ 148-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 9/1 հասցեի 1342.7քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 9/1 հասցեի 1342.7քմ հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հող:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.13427հա



Կազմ՝ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի
պետի պաշտոնակատար՝ Լ. Մանիրոսյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 093-Ն

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 17-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 37-րդ հոդվածի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով **Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Դիլիջան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 1-ի թիվ 17-Ն որոշումը:

2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Դիլիջանի համայնքի ավագանու
«05» ապրիլ-ի 2022 թվականի
N 093-Ն որոշման

# ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Դիլիջան համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները, մասնավորապես՝ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանու մինչև երեք անդամ,

2) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից մինչև երկու անդամ,

3) սոցիալական աշխատող (հաստիքի առկայության դեպքում),

4) համայնքապետարանի աշխատակազմից մինչև երկու աշխատող:

4. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

5․ Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:

6. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում):

7. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

8․ Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

9. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (առկայության դեպքում) տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

## II. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2)համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները,

4) ՀՀ-ից տեղահանվածներ և համայնքում փաստացի բնակվողներ :

11.Դիմումը (Տե՛ս *Ձև 2*-ում) ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցին անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

12. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով:

13. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը.

2) դիմումատուի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի բնօրինակը.

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

4) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը, որը փաստում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամության վկայականը.

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում).

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս և այլ).

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումին կամ գրության կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

14. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանում է, դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին: Սույն մասը չի տարածվում էլեկտրոնային կարգով ներկայացված դիմումների վրա:

Անհրաժեշտության դեպքում վերցվում են փաստաթղթերի բնօրինակները:

15. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում է սոցիալական աջակցության հարցերը քննարկող հանձնաժողովին:

16. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

17. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տնայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

18. Հանձնաժողովը իրականացնում է հետազոտություն (տնային այցելություն) և կազմում դիմումատուի սոցիալական կարիքների գնահատման ակտ:

19. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

20. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

21. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

22. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## III. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Տնայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:

24. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը (Տե՛ս **Ձև 1**):

25. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

26. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

27. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից եռօրյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

28. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

29. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

30. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

31. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

32. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի (սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

## IV. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

33. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) Նպաստառու ընտանիք - 1 միավոր,
2) միայնակ մայր - 1 միավոր,
3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
4) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք - 1 միավոր,
5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղբյուրի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
7) վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝

ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

9) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք- 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

11) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

12) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք-1 միավոր.

13) հղի կին ունեցող ընտանիք- 1 միավոր

34) անբարենպաստ այլ պայմաններ – 1-ից 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

35. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:

36. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

## V. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

37. Աջակցություն տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը կամ գրությունը.

2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) հանձնաժողովի եզրակացությունը.

6)սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը.

7) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

8) աջակցությունը դիմողին տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

38. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ (սոցիալական գործ) և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

39. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:

40. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

*Ձև 1*

## ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Հայաստանի Հանրապետության __________ մարզի __________ համայնք**

**«___»--------------20----թ.**

**Ընդհանուր տվյալներ**

**Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն** ----------------------------------------

**Հասցե** ----------------------------------------

**Հեռախոս** ----------------------------------------

## Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

## Ընտանիքի իրավիճակը

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

## Ընտանիքի սոցիալական կապերը

| Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք | |
|---|---|
| տվյալներ | կարգավիճակ |
| | |
| | |

## Լրացուցիչ տեղեկատվություն

## Մասնագետի դիտարկումներ

## Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)

## Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

| N | Չափորոշիչը | Չափորոշիչի համար սահմանված միավորը | Ընտանիքի ստացած միավորը |
|---|---|---|---|
| 1 | Նպաստառու ընտանիք | 1 | |
| 2 | Միայնակ մայր | 1 | |
| 3 | Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա | 1 | |
| 4 | Բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք | 1 | |
| 5 | Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 6 | 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 7 | Վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք | 3 | |
| 8 | Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք | 3 | |
| 9 | Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք | 2 | |
| 10 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) | 2 | |

| | | | |
|---|---|---|---|
| | կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք | | |
| 11 | Միայնակ չաշխատող թոշակառու | 2 | |
| 12 | Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք | 1 | |
| 13 | Հղի կին ունեցող ընտանիք | 1 | |
| 14 | Այլ անբարենպաստ պայմաններ | 1-5 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները

Ձև 2

<u>Դիմումի ձև</u>

ՀՀ.............................................մարզի

..........................................համայնքի

ղեկավար.........................................ին

Հասցե..................................................

..........................................բնակիչ

Անուն, ազգանուն................................

.....................................................ից

Հեռախոս.............................................

Էլ. փոստ.............................................

## Դ Ի Մ Ո Ւ Մ

### Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Հանդիսանում եմ ................ համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում, կյանքի դժվարին իրավիճակում:

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

..............................................................................................................................

.............................................................................................................................:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

| № | Փաստաթղթի անվանումը | Կցված է (կատարվում է✓ նշում) |
|---|---|---|
| 1. | Դիմում՝ լրացված սահմանված ձևով | |
| 2. | Անձը հավաստող փաստաթղթի պատճենը | |
| 3. | Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը | |
| 4. | Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին | |
| 5. | Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը | |
| 6. | Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք | |
| 7. | Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից | |
| 8. | Այլ | |

*Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:*

*Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:*

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

□էլեկտրոնային փոստի միջոցով

□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով

□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ __________ ____________________

(ստորագրություն) (դիմումատուի անուն, ազգանուն)

____ __________ 20-- թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիլիջանի համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկվում է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար նաև համայնքի կամավոր խնդրի լուծմանը միտված սեփական լիազորություն:

Վերը մեջբերվածի համատեքստում, հարկ է անդրադառնալ համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծմանը միտված սեփական լիազորությունների սահմանադրական կարգավորումներին: Այսպես՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական լիազորությունները միտված են լուծելու համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները:

Սահմանադրական վերը մեջբերված նորմով միաժամանակ սահմանվում է, որ համայնքի կամավոր խնդիրները սահմանվում են համայնքի ավագանու որոշումներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկել է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծումը իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 18-րդ հոդվածի դրույթները:

Միաժամանակ, օրենսդրական կարգավորումներից զատ, հարկ է անդրադառնալ նաև համայնքում իրականացվող սոցիալական աջակցության տեղական քաղաքականությանը, կամ որ նույնն է՝ իրավակիրառական պրակտիկային:

Ըստ էության համայնքում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները նորմատիվ իրավական կարգավորումների իմաստով կանոնակարգված չեն, ինչի պայմաններում համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները բազմաթիվ դեպքերում, առավելապես՝ համայնքում իրավական հսկողության և հաշվեքննության իրականացման գործընթացներում, դիտարկվում են որպես ոչ իրավաչափ:

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը նրանում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանու համար նախատեսվել է պարտավորություն, առանձին նորմատիվային բնույթ կրող որոշմամբ սահմանելու համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդրի լուծման չափորոշիչները:

Բացի օրենսդրական պահանջի իրագործման անհրաժեշտությունից, առկա է նաև իրավակիրառական անհրաժեշտություն և նպատակահարմարություն, համայնքային մակարդակում կարգավորելու համայնքի բյուջետային միջոցների հաշվին սոցիալական աջակցություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, սահմանելով այդ իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը միտված ընթացակարգերը և ենթաօրենսդրական կառուցակարգերը:

Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում, առաջարկվում է սահմանել այն չափորոշիչները և ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը:

Նախագծով սահմանվում է, որ սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը ապահովելու համար՝ որպես համայնքի կամավոր խնդրի լուծմանն ուղղված ավագանու սահմանած սեփական լիազորություն, համայնքի ղեկավարի կողմից ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով:

Նախագծով սահմանվում են նաև հանձնաժողովի գործունեության ընթացակարգերը, ուսումնասիրությունների կազմակերպման, եզրակացությունների տրման, որոշումների կայացման կարգը, սոցիալական փաթեթում ընդգրկվող անհրաժեշտ փաստաթղթերի կազմը: Սոցիալական

աջակցություն ստանալու համար դիմած անապահով ընտանիքի (անձի) կարիքների գնահատման համար առաջարկվում է սահմանել միավորային հետևյալ համակարգը՝

⇒ նպաստառու ընտանիք - 1 միավոր,

⇒ միայնակ մայր - 1 միավոր,

⇒ ամուսնալուծված կին կամ տղամարդ - 1 միավոր,

⇒ բազմանդամ ընտանիք - 1 միավոր,

⇒ բանակում զինվոր - 2 միավոր,

⇒ ընտանիքի անդամի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն - 2 միավոր,

⇒ բնակվում են վարձով կամ վագոն-տնակում - 3 միավոր,

⇒ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք -3 միավոր,

⇒ ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր,

⇒ հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք - 2 միավոր,

⇒ միայնակ թոշակառու - 2 միավոր,

⇒ անբարենպաստ այլ պայմաններ - 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

Աջակցություն կարող է ցուցաբերվել նվազագույնը 5 միավոր ստանալու դեպքում: Նախագծով առաջարկվում է հաստատել նաև ընտանիքի գնահատման թերթիկի ձևը (Ձև 1): Միաժամանակ, նախագծի Ձև 2 հավելվածով ներկայացվում է սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ դիմումի օրինակելի ձևը, որը համայնքապետարանի կողմից կարող է կիրառվել դիմումներ ընդունելու ժամանակ:

Համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրների լուծումը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող է իրականացվել ենթաօրենսդրական նորմատիվ կարգավորումների համատեքստում, ինչը հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար, գործելու բացառապես իրենց վերապահված

լիազորությունների և գործառույթների շրջանակներում, ապահովելով սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դիլիջան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» Դիլիջանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դիլիջան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» Դիլիջանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Դիլիջան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 094-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0296-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի 11-003-0296-0008 կադաստրային ծածկագրով հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0296-0008 կադաստրային ծածկագրով հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Գյուղատնտեսական նշանակության վարելահող:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.03166հա



Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սանթրոսյան

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 095-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 145/4 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 20.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Վարդան Մեջլումյանը՝ Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 145/4 հասցեի (նախկինում Կալինինի փողոց 147բ, 2 դպրոցին կից) 20.0քմ հողամասը, որի նկատմամբ ունի վարձակալության իրավունք, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072021-11-0042 վկայականի, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց 147բ, 2 դպրոցին կից հասցեի 20.0քմ հողամասի վարձակալ է հանդիսանում քաղ. Վարդան Մեջլումյանը: Նշված 20.0քմ հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը տրամադրվել է 2004 թվականի հոկտեմբերի 10-ին, կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր մթիվ 077: Նշված 20.0քմ մակերեսով հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 145/4 հասցեի 20.քմ հողամասը ուղղակի վաճառքի ձևով, նախապատվության իրավունքով, 210276 /երկու հարյուր տասը հազար երկու հարյուր յոթանասունվեց/ դրամ արժեքով օտարել քաղ. Վարդան Մեջլումյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 145/4 հասցեի (նախկինում Կալինինի փողոց 147բ, 2 դպրոցին կից) 20.0քմ հողամասը, որի նկատմամբ քաղ. Վարդան Մեջլումյանն-ունի վարձակալության իրավունք, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով, 210276 /երկու հարյուր տասը հազար երկու հարյուր յոթանասունվեց/ դրամ արժեքով քաղ. Վարդան Մեջլումյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 096-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 40.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 40.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 40.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Առդիր.
Դիլիջանի համայնքի ավագանու
2022թ. ապրիլի 5-ի թիվ 096-Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 3/ՔԿ-22/ | ք.Դիլիջան, Մոլդովական փ. 1/8 | 11-003-0075-0120 | 40 | Բնակավայրերի հող | ընդհանուր օգտագործման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | մինչև 2045թ. դեկտեմբերի 31-ը | 32,000 |

*Դիլիջանի համայնքի ղեկավար* *Դ.Սարգսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 097-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0102-0070 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի 11-003-0102-0070 կադաստրային ծածկագրով հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0102-0070 կադաստրային ծածկագրով հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

07618909

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացված հողամաս՝ S=0.016626հա



07618909

Կազմ՝ Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար՝ Լ. Սանդրոսյան

Բաղկացած է 1 էջից

էջ 1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 098-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 2310.7ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 6, <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ>> 1200.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 1, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 1292.4ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 1 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 772.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 2310.7քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը, <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 1200.0քմ մակերեսով թվով 1 հողամասը, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 1292.4քմ մակերեսով թվով 1 հողամասը աճուրդի և Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 772.9քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 2310.7քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը, <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 1200.0քմ մակերեսով թվով 1

հողամասը, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 1292.4քմ մակերեսով թվով 1 հողամասը աճուրդի և Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող <<Բնակավայրերի հողերից>> 772.9քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ
ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ
ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ
ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ
ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Առդանակ
ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու
2022թ. ապրիլի 5-ի թիվ 098-Ա որոշման

## Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 9/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Արցախի փ. 1/9 | 11-003-0082-0010 | 257.5 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 1,802,500 | |
| 2 | Լոտ 10/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Օրջոնիկիձեի փ. 4-րդ նրբ. 16/2 | 11-003-0276-0035 | 836.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 5,852,000 | |
| 3 | Լոտ 11/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Օրջոնիկիձեի փ. 4-րդ նրբ. 92/1 | 11-003-0295-0002 | 582.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 4,074,000 | |
| 4 | Լոտ 12/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Տ. Պետրոսյան փ. 1-ին նրբ. 1/2 | 11-003-0040-0349 | 421.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 2,947,000 | |
| 5 | Լոտ 13/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Մոլդովական փ. 1/4 | 11-003-0075-0118 | 208.1 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման | 1,456,700 | |
| 6 | Լոտ 14/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Մյասնիկյան փ. 30/1 | 11-003-0310-0137 | 6.1 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման | 67,100 | |
| 7 | Լոտ 15/ՔՀ-22/ | ք.Դիլիջան, Արցախի փ. 1/10 | 11-003-1827-0027 | 1,292.4 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 9,046,800 | |
| 8 | Լոտ 3/ԳՀ-22/ | ք.Դիլիջան | 11-003-0614-0034 | 1,200.0 | Գյուղատնտեսական նշ. հող | արոտավայր | արոտավայր | 240,000 | |
| 9 | Լոտ 8/ՔՀ-20/ կրկնաճուրդ | ք.Դիլիջան, Մոլդովական փ. 22/1 | 11-003-0066-0029 | 772.9 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի տան կառուցման | 5,410,300 | |

*Դիլիջանի համայնքի ղեկավար* *Դ. Մարգարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 099-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3.1 կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 05 ապրիլի 2022թ.-ի թիվ 099 -Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Դիլիջան 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 100-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0519-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի 11-003-0519-0014 կադաստրային ծածկագրով հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի 11-003-0519-0014 կադաստրային ծածկագրով հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Գյուղատնտեսական նշանակության վարելահող:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

M 1:5000

Ներկայացվող հողամաս՝ S=0.22494հա




Քարտեզագրության և հողաշինության բաժնի
պետի պաշտոնակատար՝ Լ. Սանթրոսյան

07618909

Բաղկացած է 1 էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 101-Ն

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Դիլիջան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի՝ համայնքի ավագանին սահմանում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները: «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետության համայնքներում տեղական տուրքերի տեսակները:

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերը մեջբերված հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ որպես տեղական տուրքի տեսակ է սահմանված հետևյալը. «համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար.»:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը համայնքի ավագանու մասով առաջին հերթին սահմանել է իմպերատիվ պարտավորություն, որով վերջինս պետք է սահմանի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:

Միաժամանակ, համայնքի ավագանին, հիմք ընդունելով իր կողմից նախապես սահմանված հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները, սահմանում է առանձին տեղական տուրքի տեսակ՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

Օրենսդրական վերը մեջբերված կառուցակարգերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ համայնքի ղեկավարի կողմից համայնքի տարածքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող թույլտվությունները, մասնավորապես՝ հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործունեության մասով, պետք է հիմնված լինեն բացառապես ավագանու կողմից սահմանված համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանող որոշման վրա:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ սույն որոշման իրավակիրառական նշանակությունը բավականին մեծ է համայնքների կայուն կենսագործման, մասնավորապես՝ տնտեսական գործունեության ապահովման համատեքստում: Ըստ էության, սույն հիմնավորումից բխող համայնքի ավագանու որոշման նախագիծը սահմանում է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման հիմնական վարքագծի կանոնները, որոնք իրենց հերթին «գալիս են թելադրելու» համայնքի ղեկավարի՝ այդ բնագավառում իրականացվելիք վարչարարական բնույթի գործողությունների ուղղությունները և շրջանակը:

«Դիլիջան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» Դիլիջան համայնքի ավագանու որոշման նախագծով առաջարկվում է սահմանել.

⇒ Այն հիմնական հասկացությունները, որոնք բխում են «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումներից.

⇒ Հանրային սննդի օբյեկտները դասակարգումը.

⇒ Հանրային սննդի ծառայություններ մատուցող կազմակերպությունների տեսակները.

⇒ Հանրային սննդի օբյեկտի վաճառողին և աշխատողին ներկայացվող պահանջները.

⇒ Հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողության և պատասխանատվության հետ կապված կարգավորումները և այլն:

Սույն որոշման ընդունման արդյունքում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կկարգավորվի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման հետ կապված ընթացակարգային բնույթի իրավահարաբերությունները, միաժամանակ, կստեղծվեն օրենսդրական հիմքեր համայնքիի ղեկավարի համար, համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ տրամադրելու մասով:

Բացի իրավական կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից, սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև համայնքում տնտեսական գործունեության խրախուսման և կանոնակարգման անհրաժեշտությամբ:

Սույն հիմնավորումից բխող համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը միտված է նաև ապահովելու «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված մի շարք համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը, մասնավորապես, նկատի ունենալով հետևյալ պարտադիր խնդիրները

- Համայնքի կայուն զարգացումը.
- Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դիլիջան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» Դիլիջան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դիլիջան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» Դիլիջան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Դիլիջան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Դիլիջան համայնքի ավագանու

«05» ապրիլի -ի 2022 թվականի

N 101-Ն որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Դիլիջան համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

**հանրային սնունդ** (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

**հանրային սննդի ծառայություն**՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

**խոհարարական արտադրանք**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,

**ճաշացուցակ**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,

**հանրային սննդի օբյեկտներ**՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

**վաճառող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ

է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

ա/ ճաշարաններ.

բ/ ռեստորաններ.

գ/սրճարաններ.

դ/բարեր.

ե/ բուֆետներ.

զ/ խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատույցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանիհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում:

8. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

9. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

11. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

12. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

13. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

14. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

15. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

16. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

17. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

18. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:

19. Անվանաքարտ կրում են համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի աշխատողները՝ աշխատավայրում գտնվելու ժամանակահատվածում:

20. Անվանաքարտն աշխատողին տրվում է աշխատանքի ընդունման հրամանի հետ կամ աշխատանքային պարտականությունների անցման պահին:

21. Անվանաքարտի վրա հայերեն տպագիր տառերով լրացվում է՝

ա) կազմակերպության ֆիրմային անվանումը,

բ) աշխատողի անունը, ազգանունը,

գ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը:

22. Անվանաքարտը պետք է պարունակի աշխատողի գունավոր լուսանկարը՝ նվազագույնը 30մմ x 40մմ չափսերով:

23. Անվանաքարտը վավերացվում է գործատուի ստորագրությամբ և կնիքով:

24. Անվանաքարտը աշխատողը կրում է իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ այն դրվում է արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:

25. Անվանաքարտ կրելու կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 29 օգոստոսի 2005 թվականի N 182-Ն որոշմամբ:

26. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

27. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

28.Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

29. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և

հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

30. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

31. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ լիազոր տեսչական մարմնի միջոցով:

32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 102-Ա

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ, ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել Դիլիջան համայնքի բնակիչ քաղ. Ռուբեն Ռազմիկի Սանամյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող BMW մակնիշի (95 SR 005 պետհամարանիշի) ավտոմեքենայի, սեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող Շամախյան 1 հասցեում գտնվող բնակելի տան հողի հարկի 2016-2020թթ. առաջացած և նույն հասցեի 2021-2022-թթ. անշարժ գույքի հարկի պարտքերի մասով արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ **Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղ. Ռուբեն Ռազմիկի Սանամյանին սեփականության իրավունքով պատկանող BMW մակնիշի (95 SR 005 պետհամարանիշի) ավտոմեքենայի, սեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող Շամախյան 1 հասցեում գտնվող բնակելի տան հողի հարկի 2016-2020թթ. առաջացած և նույն հասցեի 2021-2022-թթ. անշարժ գույքի հարկի պարտքերի մասով սահմանել արտոնություն.

1) Գույքահարկ փոխադրամիջոցների – 121287 դրամ

2) Հողի հարկ - 48512 դրամ

3) Անշարժ գույքի - 20835 դրամ

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈԶԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 103-Ա

### ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈւՅԺԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Էմմա Բարբարյանը, նշելով, որ վճարել է հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած պարտքերը 2020թ. դրությամբ, սակայն չի վճարել 2013-2020թթ. առաջացած տույժերի գումարը: Նա խնդրել է ազատել հողի հարկի և գույքահարկի նկատմամբ հաշվարկված տույժերի գումարից, որը կազմում է 239404 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ **Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.**

1.Մերժել քաղ. Էմմա Բարբարյանի 2013-2020թթ. հողի հարկի և գույքահարկի նկատմամբ հաշվարկված տույժերի գումարից ազատելու մասին խնդրանքը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -7

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ԲԱՁԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ
ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ
ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ
ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 104-Ն

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման» ծրագրին, որի նպատակն է էլեկտրաէներգիայի գծով համայնքային կազմակերպությունների ծախսերի նվազեցումը: Ծրագրի ընդհանուր ծավալում Դիլիջանի համայնքի սեփական ներդրումը կազմում է 2380.0 հազար ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և կատարել հատկացում՝
Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 2380.0 հազար /երկու միլիոն երեք հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամն ուղղել՝
01-06-01 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4657 (Այլ կապիտալ դրամաշնորհներ) տնտեսագիտական հոդվածին:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 105-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Դիլիջան համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի մայիսի 5-ին, ժամը 15:00-ին:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585, dilijan1@yahoo.com,
dilijan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 106-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին Դիլիջան համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն կից հավելվածների:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2009 թվականի
N 106 -Ն հրամանի
Օրինակելի ձև Հ-9

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
**(01.01.2022թ. - 31.03.2022թ. ժամանակահատվածի համար)**

1. Համայնքի անվանումը Դիլիջանի համայնքապետարան
2. Փոստային հասցեն ք. Դիլիջան Մյասնիկյան 55
3. Համայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը Տավուշի մարզ 211003
   ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման____110032____________
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանմաի անվանումը__________
5. Համայնքի Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը_________
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (համայնքի բյուջե 2) 2
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

«01» ապրիլի
2022թ.

Կ.Տ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ
(Ա.Ա.Հ.)